ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«05» մայիսի 2016թ. № 54-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 2-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1 և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6, 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6, հավելվածները խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն հրամանի՝ 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6, 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածների:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ